

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 42/17

ք.երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով լուծարման ենթակա հարկ վճարողների ցանկում ներառելու գործողության դեմ «Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ դիմում-բողոքը

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Բողոքաբերը հայտնում է, որ 17.06.2002թ. հաստատվել է «Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերությունը) կանոնադրությունը:

08.07.2002թ. «Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ին տրվել է 03Ա054703 իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը:

11.07.2002թ. Նոր-Նորքի (Խորհրդային) հարկային տեսչությունում «Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ին տրվել է թիվ 00832722 ՀՎՀՀ-ն:

11.02.2003թ. ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի ՊԿ կողմից տրվել է թիվ 1807924 սեփականության իրավունքի վկայականն արդյունաբերական նշանակության արտադրամասի վերաբերյալ:

13.06.2017թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից Ընկերությունը ստացել է գրություն այն մասին, որ «Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ն լուծարվել է 20.08.2012թ., համաձայն ՀՀ 2011թ. հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքի:

Բողոքաբերը հայտնում է նաև, որ որևէ գործունեություն չի իրականացրել, վերը նշված օրենքի շրջանակներում լուծարվել է, որի վերաբերյալ տեղեկացված չի եղել:

Ընկերությունը 22.03.2018թ. դիմել է ՀՀ ՊԵԿ կոմիտեի նախագահին, սակայն ստացել է գրավոր պատասխան, որ պետք է դիմել բողոքարկման հանձնաժողով:

Բողոքաբերը խնդրում է վերանայել «Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ի լուծարման գործընթացը և Ընկերությանն ընդգրկել հարկատուների ցանկում:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ն ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 08.07.2002թ.:

«Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ն համաձայն «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2011թ. հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքի պահանջների լուծարվել է:

Ընկերությունը հայտնում է, որ իրեն 11.12.2003թ. սեփականության իրավունքով պատկանում է ք.Երևան, Նոր-Նորք համայնքի, Նորքի 2 մ/2 հասցեում գտնվող արտադրական մասնաշենքը:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

«2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2011թ. հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը տարածվում է այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպությունների (այսուհետ՝ հարկ վճարող) վրա, որոնք 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին չեն ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր (այսուհետ՝ հաշվետվություն) և հարկային մարմնում առկա փաստաթղթերի համաձայն չունեն գույք ու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ կամ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն չեն վերագրանցվել, չունեն գույք և հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ»:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Սույն օրենքի 1-ին հոդվածում նշված հարկ վճարողների ցանկը և հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտավորությունների բացակայության մասին տեղեկանքը հարկային մարմինը մինչև 2011 թվականի հուլիսի 15-ը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ պետական ռեգիստր)»:

Քննարկվող դեպքում, Օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պահանջներին բավարարող հարկ վճարողների ցանկը, որում ընդգրկվել են նաև «Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ի վերաբերյալ տվյալները, հարկային մարմնի կողմից ներառվել են լուծարման ենթակա հարկ վճարողների ցանկում և ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, որի հետևանքով Ընկերությունը սահմանված կարգով լուծարվել է:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ հարկային մարմնի գործողությունները՝ կապված Ընկերության վերաբերյալ տվյալները վերոգրյալ ցանկում ներառելու և ՀՀ պետական ռեգիստր ներկայացվելու հետ, եղել են ոչ իրավաչափ, հետևյալ պատճառաբանությամբ.

Տվյալ դեպքում Ընկերության վերաբերյալ տվյալները համապատասխան ցանկում ընդգրկվելու և պետական ռեգիստր ներկայացվելու դրությամբ «Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ն ունեցել է իրեն պատկանող սեփականության իրավունքով անշարժ գույք, որը գտնվում է ք.Երևան, Նոր-Նորք համայնքի, Նորքի 2 մ/2 հասցեում:

Վերոգրյալ փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ Ընկերությունը, ըստ էության, չի բավարարել Օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պահանջներին, հետևապես նաև «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2011թ. հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքով սահմանված ցանկում Ընկերության վերաբերյալ տվյալները չպետք է ընդգրկվեն:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ն դիմում-բողոքը բավարարել և ոչ իրավաչափ ճանաչել «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2011թ. հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքի համաձայն հարկային մարմնի կողմից «Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ի լուծարման ենթակա հարկ վճարողների ցանկում ներառելու գործողությունը:

2. «Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ն համարել «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2011թ. հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքի համաձայն լուծարվող հարկ վճարողների ցանկում ներառելու ոչ ենթակա:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ